

COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 36549/03)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

28 Հունիս 2007

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով։ Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների։

Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Պրն. Բ. Մ. ԶՈՒՊԱՆՉԻՉ, *Նախագահ*
Դատավորներ
Պրն. Ս. ԲԻՐՍԱՆ,
Պրն. Ջ.-Պ. ԿՈՍՏԱ,
Տկն. Ա. ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ,
Պրն. ԴԱՎԻԴ ԹՈՐ ԲՅՈՐԳՎԻՆՍՈՆ,
Տկն. Ի. ՋԻՄԵԼԵ,
Տկն. Ի. ԲԵՐՈ-ԼԵՖԵՎՐԵ,
և Պրն. Ս. ՔՈՒԵՍԱԴԱ, *Բաժանմունքի Քարտուղար,*
2007թ. Հունիսի 7–ին կայացած դռնփակ նիստում՝
կայացրեցին հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Գործը սկիզբ է առել 2003թ. հոկտեմբերի 29-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն. Միշա Հարությունյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 36549/03 գանգատի առնչությամբ։

2. Դիմումատուին, որը ստացել է իրավական օգնություն, ներկայացնում էր փաստաբան պրն. Հ. Ալումյանը, գործունեության վայրը՝ քաղաք Երևան։ ՀՀ Կառավարությունը (Կառավարություն) ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ Կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը։

3. 2005թ. հուլիսի 5-ի որոշմամբ Դատարանը գանգատը հայտարարեց մասնակի անընդունելի և որոշեց արդար դատաքննության բացակայության հիմքով գործը ուղարկել Կառավարությանը։ Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Դատարանը որոշեց իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննությունը։

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1980թ. և ապրում է Երևան քաղաքում։

1. Գործի նախապատմությունը

5. 1998թ. հունիսի 25-ին դիմումատուն զորակոչվել է և զինվորական ծառայության է նշանակվել Ադրբեջանի հետ սահմանին կից տեղակայված թիվ 33651 զորամասում։

6. 1998թ. դեկտեմբերի 3-ին դիմումատուն և թվով հինգ այլ զինծառայողներ գտնվել են թիվ 24 մարտական դիրքում հերթափոխության մեջ։

7. 1998թ. դեկտեմբերի 4-ին հերթափոխության մեջ գտնվող վեց զինծառայողներից մեկի՝ զինծառայող Հ.-ի դիակը հայտնաբերվել է մոտակա խրամատում, վերջինս մահացել էր գնդակային հրազենային վնասվածքից։ Սպանության կատարման ժամանակ, մնացած հինգ զինծառայողներից միայն երեքն են գտնվել թիվ 24 մարտական դիրքի մոտակայքում, մասնավորապես՝ դիմումատուն և զինծառայողներ Տ.-ն և Ա.-ն։ Վերջին երկու զինծառայողները դիրքից ոչ հեռու վառելափայտ էին կոտրում։ Ըստ երևույթին, նույն օրն ավելի վաղ դիմումատուի և զինծառայող Հ.-ի միջև վիճաբանություն է տեղի ունեցել։

2. Դիմումատուի և զինծառայողներ Տ.-ի և Ա.-ի ձերբակալությունը, նրանց նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքը

8. 1999թ. մարտի 4-ին զինծառայողներ Տ.-ն և Ա.-ն բերման են ենթարկվել ռազմական ոստիկանության ստորաբաժանում։ 1999թ. մարտի 5-ին ռազմական ոստիկանության նույն ստորաբաժանում է բերվել նաև դիմումատուն։ Ռազմական ոստիկանության աշխատակիցները ծեծի են ենթարկել նրանց՝ փորձելով կորզել զինծառայող Հ.-ի սպանությունը։ Ըստ դիմումատուի նրանք ասել են ոստիկանության աշխատակիցներին, որ զինծառայող Հ.-ն հավանաբար սպանվել է սահմանի մյուս կողմից արձակած կրակոցից, որին ոստիկանության աշխատակիցները պատասխանել են, որ արդեն հաստատվել է, որ զինծառայող Հ.-ի վրա կրակել են մոտ տարածությունից և շարունակել են ծեծել նրանց։

9. Ոստիկանության աշխատակիցները դիմումատուին նախ ծեծել են բռունցքներով և ոտքերով։ Հետո ոստիկանության աշխատակիցները սկսել են ծեծել նրան զինվորական մահակով։ Մի քանի անգամ դիմումատուն կորցրել է գիտակցությունը, սակայն նրա գիտակցությունը վերականգնել են և շարունակել ծեծել վերջինիս։ Այդ ամենից հետո ոստիկանության աշխատակիցները սկսել են

հարթաշուրթերով սեղմել են դիմումատուի եղունգները: Խոշտանգումների նույն եղանակները կիրառվել են նաև զինծառայողներ Տ.-ի և Ա.-ի նկատմամբ:

10. 1999թ. մարտի 5-ին զինծառայող Տ.-ն ցուցմունք է տալիս քննիչին այն մասին, որ նա ականատես է եղել, թե ինչպես է դիմումատուն վերցրել իր ինքնաձիգը և կրակել զինծառայող Հ.-ին: Քանի որ սպանության կատարման ժամանակ զինծառայող Ա.-ն և Տ.-ն եղել են միասին, Ա.-ին հարկադրել են ցուցմունք տալ այն մասին, որ զինծառայող Տ.-ն հայտնել է իրեն սպանությանը ականատես լինելու մասին:

11. Ոստիկանության աշխատակիցները շարունակել են խոշտանգել դիմումատուին՝ հարկադրելով նրան խոստովանել սպանությունը կատարած լինելու փաստը: Ըստ դիմումատուի նման վերաբերմունքը շարունակվել է ավելի քան մեկ ամիս: Նա անկարող էր քայլել կամ հստակ խոսել և նրա մատերն այտուցվել էին:

3. Դիմումատուի խոստովանական ցուցմունքը և նրա դեմ քրեական գործի հարուցումը

12. 1999թ. ապրիլի 16-ին դիմումատուն գործը քննող քննիչի կողմից հարցաքննվել է որպես կասկածյալ և խոստովանել է նրան, որ ինքնաձիգից պատահաբար կրակել է զինծառայող Հ.-ին:

13. 1999թ. ապրիլի 17-ին դիմումատուին կանխամտածված սպանություն կատարելու մեղադրանք առաջադրվեց և նա քննիչի կողմից հարցաքննվեց որպես մեղադրյալ: Որպես մեղադրյալ հարցաքննության ժամանակ դիմումատուն կրկնեց իր կողմից տված խոստովանական ցուցմունքը: Հետագայում դիմումատուն բերվեց դեպքի վայր, որտեղ տեսաձայնագրիչի առջև պնդեց իր ցուցմունքը: Նույն օրը դիմումատուն նախնական կալանքի տակ վերցվեց:

14. Ըստ դիմումատուի, ոստիկանությունից ազատ արձակվելուց անմիջապես հետո զինծառայողներ Տ.-ն և Ա.-ն գրավոր տեղեկացրել են ՀՀ զինվորական դատախազին, որ իրենց հարկադրել էին զրպարտել դիմումատուին:

15. 1999թ. հունիսի 19-ին դիմումատուն և զինծառայողներ Տ.-ն և Ա.-ն ենթարկվեցին բժշկական զննության, որը նրանց եղունգներին և Ա.-ի գլխի վրա տարբեր վնասվածքներ արձանագրեց:

16. 1999թ. օգոստոսի 11-ին դիմումատուի և զինծառայող Տ.-ի միջև տեղի ունեցավ առերեսում, որի ժամանակ վերջինս պնդեց նախկինում դիմումատուի դեմ տված իր ցուցմունքը:

4. Դիմումատուի դատապարտումը առաջին ատյանի դատարանում

17. Դիմումատուի քրեական գործը ուղարկվեց Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

18. 1999թ. հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում զինծառայող Տ.-ն հաստատեց դիմումատուի դեմ նախկինում տված իր ցուցմունքը:

19. 1999թ. դեկտեմբերի 6-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը դիմումատուին մեղավոր ճանաչեց կանխամտածված սպանության կատարման մեջ և դատապարտեց ազատազրկման 13 տարի ժամկետով:

20. 2000թ. հունիսի 15-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը բեկանեց այս դատավճիռը և գործը ուղարկեց լրացուցիչ նախաքննության:

21. 2000թ. սեպտեմբերի 12-ին, լրացուցիչ նախաքննությունից հետո, դիմումատուի քրեական գործը կրկին ուղարկվեց Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան:

22. 2001թ. հունիսի 13-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը որոշեց ուղարկել գործը լրացուցիչ նախաքննության:

23. 2001թ. օգոստոսի 3-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը բեկանել է այդ որոշումը դատախազի միջնորդության հիման վրա և գործը վերադարձվեց Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան՝ ըստ էության քննության համար:

24. Սյունիքի մարզի առաջին ատյանում դատաքննության ժամանակ դիմումատուի փաստաբանը խնդրեց Դիմումատուի կողմից 1999թ. ապրիլի 16-17-ին տված խոստովանական ցուցմունքները, ինչպես նաև վկաներ Տ.-ի և Ա.-ի կողմից նախաքննության ժամանակ տված ցուցմունքները ճանաչել անընդունելի, քանի որ այդ ցուցմունքները ձեռք են բերվել խոշտանգումների արդյունքում: Մինչ այդ արդեն քրեական գործ էր հարուցվել ռազմական ոստիկանության աշխատակիցների դեմ, որոնք մեղադրվում էին դիմումատուի և զինծառայողների Տ.-ի և Ա.-ի նկատմամբ խոշտանգումներ կիրառելու մեջ:

25. 2002թ. հունիսի 19-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը Դիմումատուին մեղավոր ճանաչեց կանխամտածված սպանության կատարման մեջ և դատապարտեց ազատազրկման 10 տարի ժամկետով: Պատժի սկիզբը սահմանվեց 1999թ. ապրիլի 17-ը: Առաջին ատյանի դատարանը դատավճռի մեջ նշեց՝ «Դատաքննությամբ պարզվեց հետևյալը», այնուհետ նկարագրելով դիմումատուի կողմից զինծառայող Հ.-ին սպանելու հանգամանքները: Մասնավորապես, Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը նշեց.

> «Այդ արարքների համար [դիմումատուն] հանցավոր է ճանաչվել [կանխամտածված սպանության համար]:
>
> [Դիմումատուն] ... 16.04.99թ. … հարցաքննության ժամանակ ընդունել է, որ [զինծառայող Հ.ն] մահացել է [դիմումատուի] ինքնաձիգից պատահաբար արձակած գնդակից:

17.04.99թ. որպես մեղադրյալ հարցաքննության ժամանակ նորից է ընդունել, որ [զինծառայող Հ.ն] մահացել է [դիմումատուի] կողմից արձակված գնդակից՝ զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով։

Իր նման ցուցմունքը [դիմումատուն] պնդել է նաև դեպքի հանգամանքների և պարագաների վերականգնման ժամանակ [17.04.99], որի ընթացքում կատարված տեսաձայնագրումը դատարանի կողմից ցուցադրվեց սույն դատաքննության ժամանակ։

Իր այդ ինքնախոստովանական ցուցմունքներից [դիմումատուն] հետագայում հրաժարվեց։

Դատաքննության ժամանակ [դիմումատուն] իրեն մեղավոր չճանաչեց և ցուցմունք տվեց, որ ինքը [զինծառայող Հ.-ին] չի սպանել, դեպքի օրը իրենց միջև վեճ չի եղել, միմյանց չեն հայհոյել, [զինծառայող Հ.-ի] մահվան հանգամանքներն իրեն հայտնի չեն, նախաքննության ժամանակ ինքնախոստովանական ցուցմունքները տվել է [ոստիկանության աշխատակիցների] կողմից գործադրված բռնության և սպառնալիքի ազդեցության տակ։

[Դիմումատուի] կողմից բերված պատճառաբանությունները անհիմն են, չեն բխում գործի դատաքննությամբ ձեռք բերված ապացույցներից, նրան քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու համար հիմք հանդիսանալ չեն կարող։

[Դիմումատուի] կողմից բերված պատճառաբանությունները հերքվեցին և նրա կատարած հանցանքը հիմնավորվեց դատաքննությամբ ձեռք բերված հետևյալ ապացույցներով ...»։

26. Որպես այդպիսի ապացույցի օրինակ առաջին ատյանի դատարանը վկայակոչում է վկա Տ.-ի 1999թ. մարտի 5-ին տված ցուցմունքը։ Մասնավորապես՝

«[Վկա Տ.-ն] նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում [1999թ. հոկտեմբերի 26-ի դատաքննության ժամանակ]։

Նախաքննության ժամանակ իր նման ցուցմունքները [վկա Տ.-ն] պնդել է նաև [դիմումատուի հետ 1999թ. օգոստոսի 11-ին] առերես հարցաքննության ժամանակ։ Այնուհետև [վկա Տ.-ն] հրաժարվել է իր ցուցմունքներից, նշել, որ չի տեսել, թե ինչ հանգամանքներում է սպանվել [զինծառայող Հ.ն]։ Նման ցուցմունք տվեց նաև սույն դատաքննության ժամանակ, նշելով, որ իր ցուցմունքն այն մասին, որ ինքը տեսել է, թե ինչպես է [դիմումատուն զինծառայող Հ-ին] սպանել, տվել է [ոստիկանության աշխատակիցների] կողմից իր նկատմամբ կատարած բռնությունների ազդեցության ներքո։

Նույնաբովանդակ ցուցմունք տվեց նաև որպես վկա հարցաքննված [Ա.-ն]»։

27. Այնուհետև, առաջին ատյանի դատարանն իր դատավճռում վկայակոչում է մի շարք անուղղակի ապացույցներ, ուրիշի խոսքի վրա հիմնված վկայություններ և փորձագետի կարծիքն այն մասին, որ կրակոցը կատարվել է մոտ տարածությունից և եզրակացնում է հետևյալը.

«Դատարանը գնահատական տալով [վկաներ Տ.-ի և Ա.-ի] նախաքննության և դատաքննության ժամանակ տված հակասական ցուցմունքներին, գտնում է, որ իրականում [ոստիկանության աշխատակիցների] կողմից ՌՈ բաժնում բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու համար։

... Հետագայում [վկա Տ.-ի] կողմից [նախաքննության և դատաքննության ժամանակ տված ցուցմունքներից] հրաժարվելը նպատակ է հետապնդում օգնելու [դիմումատուի]՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու համար։ Այն, որ [զինծառայող Հ.-ի] սպանության հանգամանքները հայտնի են [վկա Տ.-ին] հաստատվում է նրանով, որ նա այդ մասին անկաշկանդ ցուցմունք է տվել [1999թ. հոկտեմբերի 26-ին դատական նիստի ժամանակ]՝ առանց որևէ բռնության և սպառնալիքի, ինչպես նաև զորացրվելուց հետո նույնը պատմել է իր [երկու համագյուղացիներին]»։

28. Առաջին ատյանի դատարանը գնահատական տալիս հիմք է ընդունել նաև դիմումատուի մեղքը հաստատող այլ ապացույցներ, ինչպիսիք են՝

ա) դատահյուսվածքաբանական փորձաքննության և դատաբժշկական փորձաքննության արդյունքները, համաձայն որոնց զոհը սպանվել է մոտ տարածությունից արձակված հրազենային կրակոցից,

բ) դատաձգաբանական փորձաքննության արդյունքները, համաձայն որոնց դեպքի վայրից հայտնաբերված պարկուճը կրակվել է ԱԿ-74 տեսակի թիվ 916236 համարի ինքնաձիգից, որն ամրացված է եղել դիմումատուին,

գ) 1999թ. ապրիլի 17-ին կազմված դեպքի վայրի զննության արձանագրությունով և մի շարք այլ նյութերով։

5. Ռազմական ոստիկանության աշխատակիցների դատապարտումը

29. 2002թ. հոկտեմբերի 9-ին Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանը ռազմական ոստիկանության աշխատակից Մ.-ն և երեք այլ ոստիկանության աշխատակիցներ մեղավոր ճանաչեց պաշտոնական դիրքի չարաշահման մեջ և դատապարտվեց երեքից մինչև երեք ու կես տարվա ազատազրկման։ Առաջին ատյանի դատարանը գտավ.

«1999թ. մարտի 4-ին [ոստիկանության աշխատակից Մ.-ն] … [զինծառայող Հ.-ի] սպանության վերաբերյալ քրեական գործով ... ռազմական ոստիկանություն է տեղափոխել [զինծառայող Ա.-ին և Տ.-ին] և այլոց, իսկ մարտի 5-ին նաև [դիմումատուին]։ Այստեղ [ոստիկանության աշխատակիցները] մի քանի օր շարունակ ծեծել են նրանց, զինվորական մահակով բազմաթիվ հարվածներ են հասցրել [դիմումատուին] և մյուսներին, հարթաշուրթերով սեղմել են նրանց մատների եղունգները՝ պատճառելով տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ։ Հետո [ոստիկանության աշխատակիցները] հարկադրել են հանել կոշիկները, ձեռքերը պահել ծոծրակին ու ծնկած վիճակում մահակով հարվածել են տուժողների ոտնաթաթերի տակ։ Բռնությունները շարունակելու սպառնալիքով [ոստիկանության աշխատակիցները] [դիմումատուին] հարկադրել են ցուցմունքներ տալ [զինծառայող Հ.-ին] սպանելու, [զինծառայող Տ.-ին] այդ սպանությանն ականատես լինելու, իսկ զինծառայող Ա.-ին]՝ այդ սպանությանն իրազեկ լինելու մասին։ [Ոստիկանության աշխատակիցները] միաժամանակ տուժողներին սպառնացել են կիրառված բռնությունների մասին վերադասին հայտնելու համար ...

2000թ. հունվարի 5-ին [ոստիկանության աշխատակից Մ.-ն] Երևանում, ռազմական ոստիկանության վարչության իր սենյակում [զինծառայող Ա.-ից] պահանջել է բռնությունների կապակցությամբ ցուցմունք տալ, որ [ոստիկանության աշխատակից Մ.-ին] չի ճանաչում, ոչ

ոք իրեն չի ծեծել, իսկ մատների վնասվածքներն առաջացել են մեքենայի դռան արանքում մնալու հետևանքում...

[Ոստիկանության աշխատակիցների կողմից դիմումատուի և մյուսների նկատմամբ] սիստեմատիկաբար գործադրված և նախադեպը չունեցող, իրենց բնույթով դաժան, արժանապատվությունը ստորացնող և խոշտանգման բնույթ կրող գործողություններն առաջացրել են ծանր հետևանքներ, այն է՝ ոտնահարվել են բազմաթիվ զինծառայողների օրենքով պահպանվող իրավունքները և շահերը...»:

30. Սույն դատավճիռը հիմնված է եղել վկաների, ներառյալ դիմումատուի և զինծառայողներ Տ.-ի և Ա.-ի կողմից տված բազմաթիվ ցուցմունքները, ինչպես նաև դատաբժշկական փորձաքննության արդյունքները:

31. Որպես վկա տված իր ցուցմունքի մեջ դիմումատուն նշել է, *inter alia*, որ մինչև 1999թ. մարտ ամսվա վերջը իրեն կալանքի տակ են պահել ռազմական ոստիկանությունում, որտեղ շարունակաբար ծեծի են ենթարկել: 1999թ. մարտի վերջին դիմումատուին տեղափոխել են ռազմական դատախազություն, սակայն որոշ ժամանակ անց՝ 1999թ. ապրիլի 10-ին, նորից ետ են բերել ռազմական ոստիկանություն: Հետդարձի ճանապարհին ոստիկանության աշխատակից Մ.-ն հաշվեհարդար լինելու սպառնալիքով դիմումատուից պահանջել է խոստովանել սպանությունը: Նույն օրը ոստիկանության մեկ այլ աշխատակից նույնպես սպառնացել է դիմումատուին, սակայն խոստացել է որակել այդ արարքը որպես անզգուշությամբ կատարված հանցագործություն, որից հետո դիմումատուն տվել է խոստովանական ցուցմունք:

32. Որպես վկա տված իր ցուցմունքի մեջ զինծառայող Ա.-ն գրել է, *inter alia*, որ քննիչին ցուցմունք տալուց հետո իրեն և զինծառայող Տ.-ին մոտ մեկ ամիս պահել են ոստիկանության ճաշարանում: Ապրիլ ամսվա սկզբին, ոստիկանության աշխատակից Մ.-ն կանչել է նրան և զինծառայող Տ.-ին և պահանջել, որ քննիչի կողմից հարցաքննության դեպքում նրանք ասեն, որ ոստիկանությունում եղած ժամանակ ոչ ոք իրենց չի ծեծել և իրենց հետ վատ չի վերաբերվել, իսկ մատների վնասվածքներն առաջացել են մեքենայի դռան արանքում մնալու հետևանքով: 2000թ. հունվարի 5-ին ոստիկանության աշխատակից Մ.-ն սպառնացել է, որ կսպանի նրան, եթե վերջինս քննիչին հայտնի իրեն վատ վերաբերմունք ցուցաբերելու մասին:

33. Որպես վկա տված իր ցուցմունքում զինծառայող Տ.-ն գրել է, *inter alia*, որ 1999թ. նոյեմբերի 30-ին ոստիկանության աշխատակից Մ.-ի կողմից գործադրած ճնշման ազդեցության տակ քննիչին ասել է, որ ոչ ոք իրեն չի ծեծել:

34. Դիմումատուի փաստաբանը բողոք է ներկայացրել այդ դատավճռի դեմ:

35. 2002թ. նոյեմբերի 14-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը քննել, քանի որ համաձայն ներպետական օրենսդրության, քրեական վարույթում տուժողը վերաքննության կարգով

բողոքարկման իրավունք ունի միայն այն դեպքում, երբ գործը հարուցվել է իր իսկ հայցի հիման վրա։

36. 2002թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ վճռաբեկ դատարանը այս որոշումը թողեց անփոփոխ։

6. Դիմումատուի քրեական գործով վերաքննիչ և վճռաբեկ վարույթները

37. Դիմումատուն վերաքննության կարգով բողոքարկել է 2002թ. հունիսի 19-ին իր դեմ կայացրած դատավճիռը։

38. ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանում դատաքննության ժամանակ դիմումատուն պնդեց, որ իրեն հայտնի չեն զինծառայող Հ.-ի սպանության հանգամանքները և խոստովանական ցուցմունքը նա տվել է գտնվելով սպառնալիքի ազդեցության տակ։

39. Վկա Տ.-ն պնդեց, որ չի տեսել, թե ով է սպանել զինծառայող Հ.-ին, քանի որ ինքը և վկա Ա.-ն այդ ժամանակ ներկա չեն եղել դեպքի վայրում։ Վկա Տ.-ն նաև հայտնեց, որ նախաքննական ցուցմունքներն այն մասին, որ ինքն ականատես է եղել սպանությանը, ճիշտ չեն և որ իրեն ստիպել են նման ցուցմունքներ տալ։ Անմիջապես դեպքից հետո բոլոր հինգ զինծառայողները պայմանավորվել են ասել, որ զինծառայող Հ.-ին սպանել է թուրք դիպուկահարը, սակայն իրականում, ինքը տեղյակ չէ սպանության հանգամանքներից։ Վկա Ա.-ն տվել է նույնաբովանդակ ցուցմունք։

40. 2003թ. ապրիլի 1-ին ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանն անփոփոխ թողեց դիմումատուի դեմ կայացրած դատավճիռը։ Վերաքննիչ դատարանը գտավ, որ վերը նշված ցուցմունքները հետևանք են դիմումատուի և վկաների միջև գաղտնի համաձայնության, որի նպատակն էր օգնել դիմումատուին խուսափելու քրեական պատասխանատվությունից։ Այդ ցուցմունքները հերքվել են գործով ձեռք բերված հետևյալ ապացույցներով՝

(ա) 1999թ. ապրիլի 16-ին դիմումատուի կողմից քննիչին տրված խոստովանական ցուցմունքը։ Հետագայում և դատաքննության ժամանակ դիմումատուն հրաժարվեց այդ ցուցմունքից՝ պնդելով, որ այն տվել է բռնության ազդեցության տակ, սակայն դիմումատուն չէր կարողացել նկարագրել հետաքննության մարմնում իր նկատմամբ գործադրված բռնության մանրամասները։

(բ) Վկաներ Տ.-ի և Ա.-ի կողմից Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում 1999թ. հոկտեմբերի 26-ին տրված ցուցմունքներն այն մասին, որ նրանցից մեկը տեսել է, իսկ մյուսը տեղյակ է եղել սպանության մասին։ Վկաներ Տ.-ն և Ա.-ն հետագայում հրաժարվեցին այս ցուցմունքներից, սակայն ընդունեցին, որ դատարանում ոչ մի բռնություն չի գործադրվել նրանց նկատմամբ և, որ այդ ցուցմունքները, չնայած եղել են ոչ ճշմարիտ, տրվել են կամովին։

(գ) Այլ անուղղակի ապացույցներ և ուրիշի խոսքի վրա հիմնված վկայություններ, համապատասխան փորձագիտական եզրակացություններ, տարբեր գրառումներ և տեսաձայնագրություններ։

41. Վերաքննիչ դատարանը հանգեց այն հետևության, որ սույն քրեական գործի փաստական հանգամանքներով հիմնավորված ռազմական ոստիկանությունում բռնությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները մեղադրանքի հիմքում չեն դրվել և որպես ապացույց չեն օգտագործվել։

42. 2003թ. ապրիլի 14-ին դիմումատուի փաստաբանը վճռաբեկ բողոք ներկայացրեց։ Նա պնդեց, *inter alia*, որ դիմումատուի 1999թ. ապրիլի 16-ին տված ինքնազրպարտչական ցուցմունքը, իսկ հաջորդ օրը դեպքի վայրում կատարված գրառումներն ու տեսաձայնագրությունները հետևանք են դիմումատուի նկատմամբ գործադրված ծեծի, բռնության և սպառնալիքի և հետևաբար չեն կարող օգտագործվել որպես ապացույց։ Բացի այդ, Վերաքննիչ դատարանը չպետք է հիմնվեր դատական վարույթների նախնական փուլում, ներառյալ՝ 1999 թվականի հոկտեմբերի 26-ի նիստում, վկա Տ.-ի ցուցմունքների վրա՝ նրա կողմից խոշտանգումների ազդեցության տակ տված առաջին մեղադրական ցուցմունքների արժանահավատությունը հիմնավորելու համար։ Այդ ցուցմունքները վկա Տ.-ն տվել է աննախադեպ բռնությունների արդյունքում առաջացած վախի ազդեցության տակ։ Նա անդադար գտնվել է քննիչների ճնշման տակ, մի քանի անգամ կալանավորվել է, իսկ վերը նշված դատավարության ժամանակ նա դեռ գտնվում էր զինծառայության մեջ և վախենում էր, որ իրեն նորից կտանեն մեկուսարան և ենթարկեն բռնությունների։ Որպես ապացույց, որ վկա Տ.-ն վախեցել է ներկայացնել ճշմարտությունը, դիմումատուի փաստաբանը վկայակոչում է 1999թ. նոյեմբերի 30-ին վկա Տ.-ի կողմից տված ցուցմունքն այն մասին, որ իր մատները ոչ ոք չի սեղմել հարթաշուրթերով, այլ մատների վնասվածքներն առաջացել են դրանք մեքենայի դռան տակ մնալու հետևանքում։ Այնուամենայնիվ իր նախորդ ցուցմունքներից հրաժարվելուց հետո երեք տարիների ընթացքում, վկա Տ.-ն պնդում էր, որ իրեն հայտնի չեն եղել զինծառայող Հ.-ի սպանության հանգամանքները։ Վերջապես, դիմումատուի փաստաբանը պնդում է, որ ի տարբերություն վերաքննիչ դատարանի դատավճռում շարադրված բովանդակությանը, վկա Ա.-ն դատաքննության ժամանակ երբևէ չի տվել զրպարտչական ցուցմունք դիմումատուի դեմ։ Ընդհակառակը, նա միշտ պնդել է, որ վկա Տ.-ն չէր կարող սպանության ականատես լինել, քանի որ այդ ժամանակ նրանք եղել են միասին։

43. 2003թ. մայիսի 8-ին Վճռաբեկ դատարանը վերաքննիչ դատարանի դատավճիռը թողեց անփոփոխ, իսկ դիմումատուի փաստաբանի կողմից ներկայացրած վճռաբեկ բողոքն՝ առանց բավարարման։ Իր որոշման մեջ վճռաբեկ դատարանը, *inter alia*, նշել է.

«Դատավճռի հետևությունները հիմնավորված են դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների, մասնավորապես՝ [վկաներ Տ.-ի, Ա.-ի և այլ անձանց] ցուցմունքների, [ինչպես նաև տարբեր փորձաքննությունների] եզրակացությունների վրա].

... Գործի նյութերով հիմնավորված է, որ դեպքից հետո [զինծառայողներ Տ.-ն, Ա.-ն, դիմումատուն և մյուսները] պայմանավորվել են ... ասելու, որ իբր [զինծառայող Հ.-ին] սպանել են [թուրքերը], սակայն [զինծառայող Տ.-ն] առաջին ատյանի դատարանում՝ 26.10.99 ցուցմունք է տվել այն մասին, որ [զինծառայող Հ.-ին] ... սպանել է [դիմումատուն]։

[Դիմումատուի] շահերի պաշտպանի պատճառաբանություններն այն մասին, որ դատավճռի հիմքում դրվել է [վկաներ Տ.-ին և Ա.-ին] խոշտանգելու եղանակով ձեռք բերված ցուցմունքները, անհիմն է, չի բխում գործի նյութերից և հերքված է գործում եղած հետևյալ ապացույցներով։

[Դիմումատուին, վկաներ Տ.-ին և Ա.-ին մի քանի օր ծեծել են ոստիկանության աշխատակցները], պահանջելով ճիշտ ցուցմունք տալ [զինծառայող Հ.-ի] սպանության գործով։ Ոստիկանության աշխատակիցները նշված անձանցից ցուցմունք չեն վերցրել։ Ցուցմունքները վերցրել է զինվորական դատախազության գործը քննող քննիչը, որի կողմից նրանց նկատմամբ բռնություն չի գործադրվել ...

[Ոստիկանության աշխատակիցները դատապարտվել են]։ Գործը քննած քննիչներից ոչ մեկի նկատմամբ քրեական գործ չի հարուցվել։

... [Դիմումատուի և զինծառայող Տ.-ի միջև՝ դիմումատուի պաշտպանի մասնակցությամբ] 11.08.1999թ. կատարվել է առերես հարցաքննություն, որի ընթացքում [զինծառայող Տ.-ն] պնդել է, որ [զինծառայող Հ.-ին] ինքնաձիգով սպանել է [դիմումատուն]։ Հաստատված է, որ այդ ժամանակ նրա նկատմամբ որևէ բռնություն չի գործադրվել։

[Զինծառայող Տ.-ն] հետագայում հրաժարվել է վերը նշված ցուցմունքներից և հայտնել, որ ինքը չի տեսել, թե ով է սպանել [զինծառայող Հ.-ին], չժխտելով, որ նախկինում մի քանի անգամ պատմել է, որ [դիմումատուն] սպանել է [զինծառայող Հ.-ին]։ Վերաքննիչ դատարանն իրավացիորեն արժանահավատ է համարել [Տ.-ի] խոստովանական ցուցմունքները և դրանք համարել [դիմումատուի] մեղքն ապացուցող ցուցմունքներ։

[Դիմումատուն] նախաքննության ժամանակ զինվորական դատախազության քննիչի մոտ ցուցմունք է տվել այն մասին, որ [զինծառայող Հ.-ին] ինքն է սպանել, սակայն անզգուշությամբ։

Այսպիսով, գործով ձեռք բերված ապացույցները, անկախ այն փաստից, որ նախաքննության ընթացքում զինվորական ոստիկանության աշխատակիցների կողմից [դիմումատուի և վկաներ Տ.-ի և Ա.-ի] նկատմամբ թույլ են տրվել բռնություններ, գնահատության ենթարկելով վերաբերելիության և թույլատրելիության առումով, իրենց համակցության մեջ բավարար են մեղսագրված հանցագործության մեջ [դիմումատուին] մեղավոր ճանաչելու համար»։

44. 2003թ. դեկտեմբերի 22-ին դիմումատուն պատժից պայմանական վաղաժամկետ ազատ արձակվեց։

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

45. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածները սահմանում են.

Հոդված 11. Անձի անձեռնամխելիությունը

«7. Քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, անօրինական ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ բժշկական դեղամիջոցների օգտագործմամբ, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու, ինչպես նաեւ այլ դաժան վերաբերմունքի: Արգելվում է կասկածյալից, մեղադրյալից, ամբաստանյալից, տուժողից, վկայից եւ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձանցից ցուցմունքներ կորզել բռնության, սպառնալիքի, խաբեության, նրանց իրավունքների ոտնահարման, ինչպես նաեւ այլ անօրինական գործողությունների միջոցով:»

Հոդված 20. Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելը

«1. Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր … վերաբերյալ»:

Հոդված 105. Որպես ապացույց չթույլատրվող նյութեր

«1. Քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել՝ (1) բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ, անձին ծաղրի ենթարկելով, ինչպես նաև այլ անօրինական գործողություններով...»:

Հոդված 106. Ապացույցի օգտագործման անթույլատրելիության հաստատումը

«1. Փաստական տվյալների՝ որպես ապացույց օգտագործման անթույլատրելիությունը, ինչպես նաեւ վարույթում դրանց սահմանափակ օգտագործման հնարավորությունը հաստատում է վարույթն իրականացնող մարմինը՝ սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ:»

Հոդված 126. Ապացույցների ստուգումը

«Գործով հավաքված ապացույցները ենթակա են բազմակողմանի և օբյեկտիվ ստուգման՝ ձեռք բերված ապացույցի վերլուծության, այն այլ ապացույցների հետ համադրելու, նոր ապացույցներ հավաքելու, ապացույցների ձեռքբերման աղբյուրները ստուգելու միջոցով»:

Հոդված 369. Դատավճիռ կազմելը

«3. Դատավճիռը բաղկացած է ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից։

Հոդված 371. Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասը

«Դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց է տրվում՝ (1) մեղադրանքի բովանդակությունը; (2) գործի հանգամանքների, մեղադրանքի ապացուցված լինելու և ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի հետևությունները; (3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները; և (4) օրենքի այն նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է որոշում ընդունելիս»։

III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

46. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1984թ. դեկտեմբերի 10-ին (բանաձև 39/46) ընդունված Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ Կոնվենցիան սահմանում է.

Հոդված 15

«Յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովում է, որպեսզի ցանկացած վկայություն, որ տրվել է խոշտանգման արդյունքում, ցանկացած դատավարության ընթացքում չվկայակոչվի որպես ապացույց, բացառությամբ այն դեպքերը, երբ վկայությունն օգտագործվում է ընդդեմ խոշտանգում կատարելու մեջ մեղադրվող անձի՝ որպես ապացույց, որ այդ վկայությունը տրվել է»։

ՕՐԵՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

47. Դիմումատուն պնդում է, որ խոշտանգումների միջոցով իր կողմից տված խոստովանական ցուցմունքը և վկաներ Տ.-ից և Ա.-ից ձեռք բերված ցուցմունքները դատաքննության ընթացքում օգտագործելը խախտել է արդար դատաքննության իրավունքը և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը։ Դիմումատուն վկայակոչում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի վրա, համաձայն որի.

«Յուրաքանչյուր ոք … նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի … դատարանի կողմից … արդարացի … դատաքննության իրավունք»:

Ա. Ընդունելիությունը

48. Կառավարությունը պնդեց, որ Դատարանը *ratione temporis* հիմքով իրավասու չէ քննել դիմումատուի գանգատները: Կառավարությունը նշեց, որ վիճարկվող ցուցմունքները դիմումատուից, ինչպես նաև վկաներ S.-ից և Ա.-ից 1999թ. ապրիլի 16-17-ին ձեռք են բերվել խոշտանգումների միջոցով: Հետևաբար, այն հանգամանքները, որոնք, ըստ դիմումատուի պարունակում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, տեղի են ունեցել նախքան 2002թ. ապրիլի 26-ը՝ Կոնվենցիայի Հայաստանի նկատմամբ ուժի մեջ մտնելը:

49. Դիմումատուն պնդեց, որ նա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա վիճարկում է դատաքննության ընթացքում վերը նշված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու հանգամանքը: Համապատասխան դատաքննությունները տեղի են ունեցել Կոնվենցիայի՝ **Հայաստանի** նկատմամբ ուժի մեջ մտնելուց հետո:

50. Դատարանը նշեց, որ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի համաձայն՝ Կոնվենցիան յուրաքանչյուր Պայմանավորվող Կողմի համար տարածվում է այն փաստերի վրա, որոնք տեղի են ունեցել Կողմի նկատմամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո (տես նաև, Յովանովիչն ընդդեմ Խորվաթիայի (*Jovanović v. Croatia)* գործը (որոշում), թիվ 59109/00, ECHR 2002-III): Դատարանը նշեց, որ դիմումատուն per se չի բողոքում վատ վերաբերմունքի ցուցաբերման փաստի վերաբերյալ, որն անկասկած տեղի է ունեցել մինչև 2002թ. ապրիլի 26-ը, այսինքն նախքան Կոնվենցիայի **Հայաստանի** նկատմամբ ուժի մեջ մտնելը: Դիմումատուի գանգատները վերաբերում են քրեական գործի վարույթում վատ վերաբերմունքի ցուցաբերման հետևանքով ձեռք բերված ապացույցների իր դեմ օգտագործմանը: Ինչ վերաբերում է նշված դատաքննություններին, Դատարանը նշում է, որ ներպետական դատարանների կողմից համապատասխան վճիռներն ու որոշումները կայացվել են 2002թ. ապրիլի 26-ից հետո (տես վերոնշյալ կետերը՝ 25, 40 և 43): Այստեղից հետևում է, որ Դատարանն իրավասու է քննել դիմումատուի գանգատները *ratione temporis*:

51. Դատարանն այնուհետև գտավ, որ ներկայացված գանգատներն ակնհայտորեն անհիմն չեն Կոնվենցիայի 35 հոդվածի 3-րդ մասի իմաստով: Այն նաև նշեց, որ

չկա որևէ այլ հիմք՝ գանգատներն անընդունելի հայտարարելու համար: Ուստի դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննությունը

1. Կողմերի պնդումները

(ա) Կառավարությունը.

52. Կառավարությունն ընդունեց, որ 1999թ. ապրիլի 16-ին և 17-ին ռազմական ոստիկանության բաժանմունքում հետաքննության ընթացքում դիմումատուն և վկաներ Տ.-ն և Ա.-ն ենթարկվել են խոշտանգումների և նրանց ստիպել են ցուցմունքներ տալ: Սակայն Քրեական Դատավարության Օրենսգրքի (ՔԴՕ) 105 հոդվածն արգելում է նման ճանապարհով ձեռք բերված ապացույցի օգտագործումը: Հետևաբար, դիմումատուին դատապարտելիս, ներպետական դատարանները չէին կարող և չեն հիմնվել այդ ցուցմունքների վրա: Իրենց դատավճիռներում նրանք պարզապես անդրադարձել դրանց, որպես տեղի ունեցած փաստերի, և ավելացրել, որ այդ ցուցմունքներից հետագայում հրաժարվել են: Համաձայն ՔԴՕ 126 հոդվածի՝ ներպետական դատարանները պարտավոր են համեմատել այդ ապացույցները՝ գործով ձեռք բերված այլ ապացույցների հետ և ստուգել դրանց ձեռք բերման աղբյուրներն ու թույլատրելիությունը: Սակայն, նշված ցուցմունքներն որպես ապացույցներ ընդունելը կլիներ անօրինական, քանի որ ինչպես դիմումատուն, այնպես էլ վկաներն արդեն հարաժարվել էին դրանցից: Ավելին, այն ժամանակ, երբ դիմումատուի գործը քննվում էր առաջին ատյանի դատարանում, ռազմական ոստիկանության նշված աշխատակիցների նկատմամբ արդեն իսկ հարուցված էր քրեական գործ, իսկ վերաքննիչ դատարանում դիմումատուի գործը քննելու ժամանակ, ոստիկանության աշխատակիցների նկատմամբ արդեն կայացվել էր մեղադրական դատավճիռ:

53. Ավելին, վերաքննիչ դատարանն իր 2003թ. ապրիլի 1-ի վճռում նշել է, որ. «գործի փաստական հանգամանքներով հիմնավորված, զինոստիկանությունում բռնությունների արդյունքում ձեռք բերված ապացույցը մեղադրանքի հիմքում չի դրվել և որպես ապացույց չի օգտագործվել»: Վերաքննիչ դատարանն անդրադարձել էր նաև մնացած բոլոր ապացույցներին, որոնք իրենց համակցության մեջ բավարար էին դիմումատուին դատապարտելու համար: Դրանք էին, մասնավորապես, տարբեր վկաների ցուցմունքները, մասնագետների կարծիքները և գործով ձեռք բերված այլ ապացույցները: Վճռաբեկ դատարանը ևս հիմք չի ընդունել օրենքի

խախտումով ձեռք բերված ապացույցները, իր 2003թ. մայիսի 8-ի որոշման մեջ նշելով միայն, որ ձեռք բերված ապացույցները համակցության մեջ բավարար են դիմումատուին մեղավոր ճանաչելու համար: Նման «ապացույցներ» ասելով՝ վճռաբեկ դատարանը ի նկատի է ունեցել միայն այն ցուցմունքները, որոնք տրվել են վկաների կողմից դատաքննության ընթացքում: Ի վերջո, եթե դատարանները հիմնվեին իրենց վճիռներում դիմումատուի խոստովանական ցուցմունքի վրա, ապա դիմումատուի կողմից կատարված հանցագործությունը կորակվեր որպես «անզգույշ սպանություն» և ոչ թե որպես «դիտավորյալ սպանություն», քանի որ դիմումատուն խոստովանել էր, որ «պատահաբար կրակելով սպանել է զինծառայող Հ.-ին»: Վերոգրյալն ամփոփելու դեպքում ստացվում է, որ, դիմումատուին մեղավոր ճանաչելու համար խոշտանգումների միջոցով ձեռք բերված դիմումատուի խոստովանական ցուցմունքը և վկաներ Տ.-ի և Ա.-ի ցուցմունքները որպես հիմք չեն ընդունվել ոչ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի, ոչ վերաքննիչ դատարանի կողմից:

54. Կառավարությունը այնուհետև պնդեց, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում առկա չէ նույնիսկ այն դեպքում, եթե ընդունենք, որ ներպետական դատարանները իրենց դատավճիռների հիմքում օգտագործել են խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները, քանի որ դիմումատուի մեղքն ապացուցված է եղել գործով ձեռք բերված այլ ապացույցներով: Դատարանը Շենկն ընդդեմ Շվեյցարիայի (*Schenk v. Switzerland)* գործով (12 հուլիս 1988թ. վճիռը, Շարք Ա **թիվ** 140, pp. 29-30, կետ 48) գտավ, որ առկա չէ 6-րդ հոդվածի խախտում, քանի որ անօրինական ճանապարհով ձեռք բերված ապացույցը միակ ապացույցը չէր, որն ապացուցում էր դիմումատուի մեղքը: Համաձայն Դատարանի նախադեպի՝ ապացույցի ընդունելիությունն ու գնահատումը հանդիսանում է ներպետական դատարանների իրավասությունը, իսկ Դատարանը պետք է պարզի արդյոք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել: Տվյալ գործում, դիմումատուին մեղավոր ճանաչելը հիմնված էր մի շարք այլ ապացույցների վրա, ներառյալ այն վկայությունների, որոնք դիմումատուն և վկաներ Տ.-ն ու Ա.-ն տվել են դատական վարույթի ընթացքում:

(բ) Դիմումատուն

55. Դիմումատուն նշեց, որ Կառավարության այն պնդումը, թե խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքներն իրեն դատապարտելու համար հիմք չեն հանդիսացել, չի համապատասխանում գործի փաստական հանգամանքներին:

Համաձայն ՔԴՕ 369-րդ հոդվածի, դատավճիռը պետք է բաղկացած լինի ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից: Համաձայն ՔԴՕ 371-րդ հոդվածի, նկարագրական-պատճառաբանական մասը պետք է պարունակի՝ (1) մեղադրանքի բովանդակությունը, (2) գործի հանգամանքների, մեղադրանքի ապացուցված լինելու և ամբաստանյալի մեղավորության մասին դատարանի հետևությունները, (3) այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, (4) օրենքի այն նորմերը, որոնցով դատարանը ղեկավարվել է իր որոշումն ընդունելիս: Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2002թ. հունիսի 19-ի դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասը սկսվում էր հետևյալ բառերով՝ «Դատաքննությամբ պարզվեց հետևյալը», դրան հաջորդում են գործի հանգամանքների նկարագրությունը, դատարանի եզրակացությունները և ապացույցները, որոնց վրա հիմնված էին այդ եզրակացությունները: Որպես նման ապացույցի դատարանը հղում էր կատարում դիմումատուի՝ 1999թ. ապրիլի 16-ին և 17-ին տված խոստովանական ցուցմունքին և վկաներ Տ.-ի և Ա.-ի տված ցուցմունքներին, որոնք ձեռք էին բերվել խոշտանգումների միջոցով: Այնուհետև, համեմատելով վկաներ Տ.-ի և Ա.-ի՝ նախնական քննության ընթացքում տված ցուցմունքները, ներառյալ բռնության ազդեցության տակ տված ցուցմունքներն, այն ցուցմունքների հետ, որոնք տրվել էին գործի քննության հետագա փուլերում, առաջին ատյանի դատարանը նախապատվությունը տվեց խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքներին և նշեց, որ «բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու նպատակով»:

56. Բացի այդ, վերաքննիչ դատարանն անփոփոխ թողնելով 2002թ. հունիսի 19-ի դատավճիռը՝ դրանով իսկ այն համարեց օրինական և բավարար չափով հիմնավորված: Ավելին, վերաքննիչ դատարանը նույնպես վկայակոչեց դիմումատուի՝ 1999թ. ապրիլի 16-ի խոստովանական ցուցմունքը, որպես նրա մեղքը հաստատող ապացույց: Վերաքննիչ դատարանն այնուհետև վկայակոչել էր Սյունիքի մարզի դատարանում վկաներ Տ.-ի և Ա.-ի կողմից՝ դատաքննության սկզբնական շրջանում տված ցուցմունքները: Սակայն ի տարբերություն վկա Տ.-ի, վկա Ա.-ն առաջին ատյանի դատարանում երբեք նման ցուցմունք չէր տվել: Հետևաբար, վկայակոչվող ցուցմունքները վկա Ա.-ի կողմից նախնական քննության ընթացքում տված ցուցմունքներն էին, երբ նա խոշտանգումների էր ենթարկվում: Ավելին, վճռաբեկ դատարանն իր 2003թ. մայիսի 8-ի որոշման մեջ չէր ժխտել մեղադրանքի հիմքում խոշտանգումների միջոցով վկաներ Տ.-ից և Ա.-ից կորզված ցուցմունքներն օգտագործելու փաստը: Վճռաբեկ դատարանը որպես դիմումատուի մեղքի ապացույց նաև վկայակոչել

էր նրա 1999թ. ապրիլի 16-ի ցուցմունքը: Ի վերջո, անտեսելով պաշտպանության կողմից ներկայացրած մի շարք միջնորդությունները, դատական երեք ատյաններից և ոչ մեկը որոշում չէր կայացրել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքն օգտագործումն անթույլատրելի ճանաչելու մասին, թեև համաձայն ՔԴՕ 106 հոդվածի նրանք օժտված էին նման իրավունքով: Ամփոփելով՝ Կառավարության պնդումն առ այն, որ խոշտանգումների միջոցով ձեռք բերված ապացույցը հիմք չի ծառայել դիմումատուի դատապարտման համար, հակասում է գործի փաստական հանգամանքներին:

57. Դիմումատուն այնուհետև պնդեց, որ խոշտանգումների միջոցով ձեռք բերված ապացույցի օգտագործումը հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Բոլոր երեք ատյանի դատարանների կայացրած դատավճիռներից ակնհայտ երևում է, որ դիմումատուից և վկա Տ.-ից բռնությամբ կորզված ցուցմունքներն որոշիչ դեր են խաղացել դիմումատուին դատապարտելու հարցում: Իրականությանը համապատասխանում է նաև այն, որ դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել նաև մի շարք այլ ապացույցների վրա: Այնուամենայնիվ այդ ապացույցները օգտագործվել էին միայն գործով երեք գլխավոր ապացույցները, մասնավորապես դիմումատուի և վկաներ Տ.-ի և Ա.-ի՝ բռնության ազդեցության տակ տված ցուցմունքները, հաստատելու համար: Դատարանները նաև հիմնվել են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած առաջին դատավարության ժամանակ տված վկա Տ.-ի ցուցմունքի վրա: Այնուամենայնիվ, գործը երեք անգամ քննվել է առաջին ատյանի Դատարանում, և երկրորդ ու երրորդ դատավարությունների ժամանակ վկա Տ.-ն ցուցմունք է տվել, որ նա հարկադրված է եղել զրպարտել դիմումատուին խոշտանգումների և ահաբեկության հետևանքով, և որ ինքը անտեղյակ է զինծառայող Հ.-ի սպանության հանգամանքներից:

2. Դատարանի գնահատականը

58. Դատարանը նախ և առաջ անհրաժեշտ է համարում անդրադառնալ կողմերի փաստարկներին, թե արդյոք դիմումատուի դեմ հարուցված քրեական գործի դատաքննության ընթացքում ներպետական դատարանները, որպես ապացույցը օգտագործել են դիմումատուի կողմից 1999թ. ապրիլի 16-ին և 17-ին տված խոստովանական ցուցմունքը, ինչպես նաև վկաներ Տ.-ի և Ա.-ի 1999թ. մարտի 5-ին տված ցուցմունքները: Անդրադառնալով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2002թ. հունիսի 19-ի դատավճռին, Դատարանը նշում է, որ Մարզային դատարանը վկայակոչել է դիմումատուի խոստովանական

ցուցմունքը՝ առանց դրա արժանահավատության վերաբերյալ որևէ կասկած արտահայտելու (տես վերը, կետ 25)։ Բացի այդ, դիմումատուի անմեղ լինելու հանգամանքը հերքելիս, Մարզային դատարանը ի թիվս այլ ապացույցների ուղղակիորեն հիմնվել է վկա Տ.-ի՝ 1999թ. մարտի 5-ին տված ցուցմունքի վրա (տես վերը կետ 26)։ Մարզային դատարանը եկավ այն եզրահանգման, որ «հետաքննության մարմինների կողմից ռազմական ոստիկանության բաժնում բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու համար» (տես վերը կետ 27)։ Այս ձևակերպումը ստիպում է Դատարանին հավատալ, որ Մարզային դատարանը, անտեսելով վատ վերաբերմունքի ցուցաբերման փաստը, դիմումատուի և վկաներ Տ.-ի և Ա.-ի կողմից 1999թ. մարտ-ապրիլ ամիսներին տված ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ առնելու հիմքեր չի գտել և հետևաբար չի բացառել դրանց օգտագործումն որպես ապացույց։ Ավելին, քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը 2003թ. ապրիլի 1-ի դատավճռում ուղղակիորեն անդրադարձել է դիմումատուի՝ 1999թ. ապրիլի 16-ի խոստովանական ցուցմունքին որպես նրա մեղքը հավաստող ապացույցի (տես վերը կետ 40)։ Վճռաբեկ դատարանը 2003թ. մայիսի 8-ի որոշմամբ նույնպես գտել է, որ «Վերաքննիչ դատարանը իրավացիորեն արժանահավատ էր համարել Տ.-ի խոստովանական ցուցմունքը և այն համարել դիմումատուի մեղքի ապացույց»։ Այնուհետև վճռաբեկ դատարանը գործով ձեռք բերված այլ ապացույցների շարքում, վկայակոչել էր նաև դիմումատուի՝ 1999թ. ապրիլի 16-ին քննիչի մոտ տված խոստովանական ցուցմունքը (տես վերը կետ 43)։ Ի վերջո Դատարանը նշում է, որ չնայած պաշտպանության կողմի ներկայացրած մի քանի միջնորդությունների, եռաստիճան դատական համակարգից և ոչ մի ատյանում քննարկվող ցուցմունքների օգտագործումը որպես ապացույցի հստակորեն անթույլատրելի չի համարվել։

59. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ Դատարանը հանգում է այն եզրակացության, որ ներպետական դատարանները դիմումատուին մեղավոր ճանաչելու ապացույցների շարքում որպես ապացույց օգտագործել են նաև դիմումատուի խոստովանական ցուցմունքը և վկաներ Տ.-ի ու Ա.-ի բռնության ազդեցության տակ տված ցուցմունքները։ Կառավարության հակառակ պնդումները չեն հիմնավորվում ներպետական դատարանների վճիռների եզրահանգումներով։ Հետևաբար, անհրաժեշտ է միայն որոշել, թե արդյոք բռնության ազդեցության տակ ձեռք բերված ցուցմունքների օգտագործումը խախտում է դիմումատուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները։

60. Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն, իր պարտականությունն է հանդիսանում Կոնվենցիայով Բարձր Պայմանավորվող Պետությունների ստանձնած պարտավորությունների կատարման ապահովումը: Մասնավորապես, ներպետական դատարանների կողմից փաստական կամ իրավական ենթադրյալ սխալների ուսումնասիրությունը չի հանդիսանում նրա գործառույթը, քանի դեռ և այնքանով որքանով որ այդ սխալները չեն խախտել Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքներն ու ազատությունները: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը՝ միևնույն ժամանակ, այն չի սահմանում ապացույցի ընդունելիության վերաբերյալ կանոններ, որպես այդպիսիք, որն ի սկզբանե հանդիսանում է ներպետական օրենքի կարգավորման առարկա (տես նաև վերոնշյալ Շեննկն ընդդեմ Շվեյցարիայի (*Schenk v. Switzerland) գործը,* կետ 45-46):

61. Հետևաբար, սկզբունքորեն Դատարանի խնդիրը չէ որոշել ապացույցների որոշակի տեսակների, օրինակ, ներպետական օրենսդրության խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման թույլատրելիությունը, կամ որոշել արդյոք դիմումատուն իրականում մեղավոր է, թե ոչ: Պատասխան ակնկալող հարցն այն է, թե արդյոք քննությունը, որպես ամբողջություն, ներառյալ եղանակը, որի միջոցով ձեռք է բերվել ապացույցը, եղել է արդար: Սա ներառում է վիճարկվող «անօրինականության» ստուգումը և եթե խոսքը գնում է Կոնվենցիայով սահմանված այլ իրավունքի խախտման մասին. վերջինիս բնույթի պարզումը (տես, *inter alia*, Խանը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության (*Khan v. the United Kingdom)*, թիվ 35394/97, կետ 34, ECHR 2000-V, և Փ.Ջ-ն և ՋԵՅ.ԷՅՉ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (*P.G. and J.H. v. the United Kingdom)*, թիվ 44787/98, կետ 76, ECHR 2001-IX).

62.Ինչ վերաբերում է, մասնավորապես Կոնվենցիայի խախտման բնույթի ուսումնասիրությանը, ապա Դատարանը հիշեցնում է, որ մասնավորապես *Khan-ի* (վերը նշված, 25-28 կետերը) և *P.G. and J.H. v. the United Kingdom* (վերը նշված, 37-38 կետերը) գործերով ինքն արձանագրել է,որ գաղտնի ձայնագրող սարքի օգտագործումը հանդիսացել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում, քանի որ նման միջոցի օգտագործումը չունի իրավական հիմքեր ներպետական օրենսդրության մեջ, և դիմումատուի՝ անձնական կյանքը հարգելու իրավունքին միջամտությունը «նախատեսված չէր օրենքով»: Չնայած որ այդ գործերի հանգամանքներում նման ճանապարհով ստացված տեղեկատվությունը որպես ապացույց օգտագործելը չի հակասել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդարության պահանջներին:

63. Դատարանը նշում է, որ այնուամենայնիվ, գոյություն ունեն տարբեր մոտեցումներ 3-րդ հոդվածի խախտմամբ ձեռքբերված ապացույցների նկատմամբ: Հարցը կարող է առաջանալ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի ներքո այն ապացույցի կապակցությամբ, որը ձեռք էր բերվել հոդված 3-ի խախտումով, նույնիսկ եթե դատապարտման համար նման ապացույցի ընդունելիությունը չուներ վճռորոշ նշանակություն: Հոդված 3-ի խախտումով ձեռք բերված ապացույցի՝ քրեական դատավարության ժամանակ օգտագործումը, դատավարության արդարության առումով լուրջ խնդիրներ է առաջացնում: Մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանության կամ իրեղեն ապացույցի տեսքով, որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, երբեք չպետք է դրվի տուժողի մեղքի ապացույցի հիմքում, անկախ նրա ապացուցողական նշանակությունից: Ցանկացած այլ եզրահանգում միայն կծառայի բարոյապես դատապարտելի արարքը անուղղակիորեն արդարացնելու համար, որը Կոնվենցիայի հոդված 3-ի հեղինակները ջանացել են արգելել, այլ կերպ ասած «թույլ կտա դաժանությունների գործադրումն օրենքին քողի տակ» (տես, վերջին աղբյուրներից, Յալլոհն ընդդեմ Գերմանիայի (*Jalloh v. Germany)* [GC], թիվ 54810/00, կետ 99 և 105, ECHR 2006-...):

64. Սույն գործով Դատարանը նշում է, որ դիմումատուն հարկադրված է եղել խոստովանական ցուցմունքներ տալ, իսկ վկաներ S-ն և A-ն հարկադրված են եղել տալ ցուցմունքներ, որոնք ապացուցում են դիմումատուի մեղքը: Այս փաստը հաստատվել էր ներպետական դատարանների կողմից (տես վերը 29-36 կետերը) և չի վիճարկվում կողմերի միջև: Դատարանը տվյալ գործով չի կոչված որոշել, թե արդյոք վերը նշված ցուցմունքները տալու նպատակով, դիմումատուի և վկաներ S-ի և A-ի նկատմամբ ցուցաբերած վատ վերաբերմունքը հոդված 3-ի իմաստով հանդիսանում է խոշտանգում: Ամեն դեպքում այս հարցը չի հանդիսանում Դատարանի իրավասությունը *ratione temporis* (տես վերը կետ 50) Այնուամենայնիվ այս կապակցությամբ Դատարանը վկայակոչում և համաձայնվում է Երևանի Ավան և Նոր Նորք համայնքների առաջին ատյանի դատարանի 2002թ. հոկտեմբերի 9-ի դատավճռի եզրակացությունների հետ, որը դատապարտեց ոստիկանության աշխատակիցների արարքը՝ որակելով դրանք որպես խոշտանգման հատկանիշներ պարունակող (տես վերը 29 կետը): Ավելին, Կառավարությունն իր պնդումներում նույնպես դիմումատուի և վկաներ S-ի և A-ի նկատմամբ ցուցաբերած վատ վերաբերմունքը որպես խոշտանգում բնութագրեց (տես վերը

52 կետը)։ Նույնիսկ եթե Դատարանի իրավասությունից դուրս է *ratione temporis* դիմումատուի և վկաներ Տ-ի և Ա-ի նկատմամբ վատ վերաբերմունքի հանգամանքների վերաբերյալ 3-րդ հոդված համատեքստում ուսումնասիրության կատարումը, այնուամենայնիվ այն զրկված չէ վերընշված որակումը հաշվի առնելու հնարավորությունից, որպեսզի որոշի 6-րդ հոդվածի երաշխիքներին համապատասխանությունը։ Դատարանն այնուհետև նշեց իր եզրակացությունը, որ նման վերաբերմունքի հետևանքով ձեռք բերված ցուցմունքները փաստորեն օգտագործվել էին ներպետական դատարաններում որպես ապացույց՝ դիմումատուի դեմ քրեական դատավարությունում (տես վերը 59 կետը)։ Ավելին, սա կատարվել էր անտեսելով այն փաստը, որ վատ վերաբերմունքի ցուցաբերման փաստն արդեն հաստատված էր զուգահեռ ընթացող վարույթում, որը հարուցվել էր ոստիկանության քննարկվող աշխատակիցների նկատմամբ։

65. Այս կապակցությամբ Դատարանը մեջբերում է, որ ներպետական դատարանները արդարացրել են խոստովանական ցուցմունքի օգտագործումը այն փաստերով, որ դիմումատուն խոստովանել էր քննիչին այլ ոչ ոստիկանության աշխատակիցներին, որոնք նրա նկատմամբ վատ վերաբերմունք էր ցուցաբերել, որ վկա Տ-ն հաստատել էր իր նախկին ցուցմունքները 1999թ. օգոստոսի 11-ին առերեսման ժամանակ և այն փաստով, որ երկու վկաներն էլ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում համանման ցուցմունքներ էին տվել 1999թ. հոկտեմբերի 26-ի դատալսման ժամանակ։ Նման հիմնավորումը սակայն համոզիչ չէ Դատարանի համար։ Նախ և առաջ, Դատարանի կարծիքով առկա են համոզիչ ապացույցներ այն մասին, որ անձը ենթարկվել է վատ վերաբերմունքի, ինչպես նաև հոգեբանական ճնշումների և սպառնալիքների։ Այն փաստը, որ դիմումատուն խոստովանել, կամ իր հետագա ցուցմունքներում հաստատել է ճնշման տակ տրված իր խոստովանությունը ոչ թե նշված վատ վերաբերմունքի ցուցաբերման համար պատասխանատու, այլ մեկ այլ մարմնին, չպետք է մեխանիկորեն հանգեցնի այն եզրակացության, որ նման խոստովանությունը կամ հետագա ցուցմունքները չեն հանդիսացել հետևանք՝ նրա նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի և նրա հետագա ապրումների վերաբերյալ հնարավոր վախի։ Երկրորդ. նման արդարացումը ակնհայտորեն հակասում է այն եզրահանգումներին, որոնք շարադրվել են ոստիկանության՝ խոշտանգումներ կիրառած աշխատակիցների նկատմամբ կայացված մեղադրական դատավճռում, համաձայն որի «սպառնալով շարունակել խոշտանգումները՝ ոստիկանության աշխատակիցները ստիպել են դիմումատուին խոստովանել» (տես վերը 29 կետը)։ Ի վերջո, կային բավարար

ապացույցներ առ այն, որ վկաներ S-ն և Ա-ն ենթարկվել են հետագայում խոշտանգումների ենթարկվելու և իրենցից վրեժ լուծելու վերաբերյալ շարունակական սպառնալիքների 1999թ. ընթացքում և 2000թ. սկզբին (տես վերը կետեր 29 և 32-33)։ Ավելին, այն փաստը, որ նրանք դեռևս զինվորական ծառայության մեջ էին, անկասկած կարող էր իրենց ավելի վախեցնել և ազդեցություն ունենալ ցուցմունքների վրա։ Սա հաստատվում է այն փաստով, որ զորացրվելուց հետո այդ ցուցմունքների բնույթն էականորեն փոխվել էր։ Հետևաբար այդ շրջանում տրված ցուցմունքների արժանահավատությունը պետք է կասկածանքի տակ առնվի, և հետևաբար այդ ցուցմունքները չպետք է վկայակոչվեին խոշտանգումների ազդեցության հետևանքով տրված ցուցմունքների արժանահավատության հիմնավորման համար։

66. Վերընշված վերլուծության հիման վրա Դատարանը եզրահանգում է, որ անկախ նրանից, թե ինչ ազդեցություն են ունեցել խոշտանգումների միջոցով ձեռք բերված ցուցմունքները դիմումատուի քրեական վարույթի արդյունքի վրա, նման ապացույցի օգտագործումը ամբողջ դատավարությունը դարձնում է անարդար։ Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում։

67. Հանգելով նման եզրակացության, Դատարանն անհրաժեշտ չի համարում առանձին անդրադառնալ դիմումատուի այն փաստարկին, որ իր խոստովանական ցուցմունքի օգտագործումը հանգեցրել էր ինքն իր դեմ ցուցմունք չտալու իր իրավունքի խախտման։

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41 ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

68. «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կան դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»։

Ա. Վնասը

69. Դիմումատուն պահանջում էր մոտ 12,000,000 ՀՀ դրամի չափ գումար, (մոտ 22 160 եվրո) որպես նյութական վնասի հատուցում: Նա մասնավորապես նշում է, որ իր՝ կալանքի և բանտարկության մեջ անցկացրած չորս տարի և ութ ամիսների ընթացքում ամեն շաբաթ իր ծնողները սնունդով, ծխախոտով և հիգիենայի պարագաներով ծանրոցներ են բերել: Ամեն ծանրոցի արժեքը մոտ 20-25,000 դրամ (մոտ 36-46 եվրո), այդպիսով ընդհանուր արժեքը կազմում է 5-6,000,000 ՀՀ դրամ: Ավելին, ամբողջ այդ ժամանակահատվածում նա զրկված է եղել աշխատելու հնարավորությունից: Եթե ենթադրենք, որ նա կարող էր ամսեկան առնվազն 100,000 դրամ վաստակել (մոտ 185 եվրո), ապա վնասի չափը հասնում է 5,600,000 ՀՀ դրամի: Դիմումատուն նաև պահանջել էր ոչ նյութական վնասի հատուցում 120,000 եվրոյի չափով: Նա պնդել էր, որ Կոնվենցիայի խախտման պատճառով նա չորս տարի և ութ ամիս զրկված է եղել ազատությունից: Բացի դրանից, այդ ամբողջ ժամանակահատվածում նա որպես մարդասպան էր պիտակված եղել:

70. Կառավարությունը պնդեց, որ ծանրոցների ենթադրյալ արժեքը, որոնց վերաբերյալ չկար որևէ փաստաթղթային ապացույց, չի հանդիսանում ենթադրյալ խախտման հետևանք: Դրանք ոչ անհրաժեշտ էին, ոչ էլ կարող էին իրական վնաս կամ բաց թողնված օգուտ համարվել: Ամեն դեպքում ծախսերը չափազանցված էին, քանի որ տվյալ բանտի սահմանված կանոնների համաձայն՝ կալանավորը կամ բանտարկյալը կարող էր ամսեկան միայն մեկ ծանրոց ստանալ: Ինչ վերաբերում է չստացված վաստակին, ապա այս պահանջը ենթադրական բնույթ ուներ: Բացի այդ, դիմումատուի բանտարկության և նրա գործազրկության միջև պատճառական կապ չկար: Ինչ վերաբերում է բարոյական վնասին՝ Կառավարությունը պնդեց, որ խախտման ճանաչումը արդեն իսկ բավարար կլիներ: Ամեն դեպքում պահանջած գումարը չափազանցված էր:

71. Դատարանը նշում է, որ դիմումատուի՝ ծանրոցների կապակցությամբ կատարված ծախսերի վերաբերյալ պահանջը չի պարունակում որևէ նյութական վնաս, որը կրել է դիմումատուն և վերաբերում է ծախսերին, որոնք ենթադրաբար կատարվել են նրա ծնողների կողմից, որոնք տվյալ գործով դիմումատուներ չէին և հետևաբար չէին կարող հանդիսանալ Կոնվենցիայի խախտման հետևանքով ուղղակիորեն տուժած անձիք: Ինչ վերաբերում բաց թողնված ենթադրյալ վաստակին, ապա Դատարանը համաձայն է Կառավարության հետ այս պահանջի ենթադրական բնույթի վերաբերյալ: Հետևաբար այն մերժում է դիմումատուի նյութական վնասի պահանջը: Մյուս կողմից Դատարանը համարում է, որ դիմումատուն, որպես իր դեմ սկսված

քրեական հետապնդման ժամանակ խոշտանգումների միջոցով ստացված ապացույցի օգտագործման հետևանք, հուսալքություն, անօգնականություն և անհանգստություն է ապրել և դա չի կարող փոխհատուցվել միայն խախտման ճանաչմամբ: Այնուամենայնիվ Դատարանը նշում է, որ պահանջած բարոյական վնասի չափը չափազանց մեծ է: Դատարանը՝ հիմնվելով համարժեքության վրա, դիմումատուին սահմանում է փոխհատուցում 4,000 եվրո՝ կրած ոչ նյութական վնասի կապակցությամբ:

Բ. Ծախսեր և Ծախքեր

72. Դիմումատուն՝ նաև դատական ծախսերի համար պահանջում է 13,115,000 ՀՀ դրամ (մոտ 24,220 եվրո), ներառյալ իր փաստաբանի կողմից կատարված տրանսպորտային և հյուրանոցային ծախսերը 1,464,000 դրամի (մոտ 2,703 եվրո) չափով, որը, մասնակցելով 16 դատական լսումների Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում, ստիպված էր եղել տաքսիով ուղևորվել Սյունիքի մարզ և հաճախակի գիշերել այնտեղ: Դիմումատուի փաստաբանը 1999թ. մայիս ամսից սկսած 770 ժամ իրավաբանական աշխատանք է կատարել, որի գումարը կազմում է 11,550,000 ՀՀ դրամ (մոտ 21,330 եվրո), նաև փոստային ծախսերը 101,000 ՀՀ դրամի չափով (մոտ 186 եվրո): Տրանսպորտային ծախսերի հետ կապված դիմումատուն նշեց, որ նա չի կարող այս ծախսերի կատարված լինելը հավաստող ապացույց ներկայացնել, քանի որ **Հայաստանում** այդ ժամանակ միայն մի քանի տաքսիներ էին սարքավորված այնպիսի սարքավորումներով, որոնք վճարման անդորրագիր տրամադրելու հնարավորություն ունեին: Ինչ վերաբերում է 770 ժամ իրավաբանական աշխատանքին՝ դիմումատուն նշեց, որ քանի որ նա 2000թ. անվճարունակ է եղել, նա իր փաստաբանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել, որ կվճարի վերընշված գումարը ապագայում, երբ ազատ արձակվի և հնարավորություն ունենա գումար վաստակել:

73. Կառավարությունն առարկեց, որ դիմումատուն չէր կարողացել որևէ փաստաթղթային ապացույց ներկայացնել փաստաբանի աշխատանքի վարձատրության կապակցությամբ: Նա չէր ներկայացրել որևէ ապացույց, որը կվկայեր այն մասին, որ այս ծախսերը իրականում կատարված էին կամ անհրաժեշտ էին, կամ որ իր և իր փաստաբանի միջև գոյություն ուներ նման պայմանավորվածություն վերընշված գումարը ապագայում վճարելու կապակցությամբ: Ամեն դեպքում պահանջվող գումարը չափազանցված էր: ՈՒղևորությունների և հյուրանոցային ծախսերի կապակցությամբ դիմումատուն նույնպես չէր կարողացել որևէ փաստաթղթային ապացույց

ներկայացնել: Նրա այն պնդումը, որ Հայաստանի տաքսիները չէին սարքավորված համապատասխան սարքավորումներով չի համապատասխանում իրականությանը, և նա նույնպես չկարողացավ հիմնավորել, որ Սյունիքի մարզ անհրաժեշտ էր երթևեկել տաքսիով, այն դեպքում երբ գոյություն ունեին ավելի մատչելի տրանսպորտային միջոցներ: Եվ վերջապես փոստային ծախսերի կապակցությամբ, ոչինչ չի ցույց տալիս, որ դիմումատուի ներկայացուցիչ՝ պրն. Հ. Ալումյանի կողմից ներկայացված փոստային անդորրագրերը վերաբերում են Դատարանի հետ տվյալ գործի շրջանակներում հաղորդակցությանը, այլ ոչ մյուս գործերին, որոնցով նա նույնպես ներգրավված էր որպես ներկայացուցիչ:

74. Համաձայն Դատարանի նախադեպի՝ դիմումատուին ծախսերի և ծախքերի փոխհատուցում է տրվում եթե նա ապացուցում է որ դրանք իրականում գոյություն են ունեցել եղել անհրաժեշտ և ողջամիտ (տես Սանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (*The Sunday Times v. the United Kingdom) (թիվ 1)* (Հոդված 50), վճիռ 6 նոյեմբեր 1980թ., Շարք Ա թիվ 38, էջ 13, կետ 23) Դատարանը նշում է, որ դիմումատուն փաստաթղթային ապացույց է ներկայացրել միայն իր փոստային ծախսերի առումով՝ 144 ԱՄՆ դոլարի չափով (մոտ 122 եվրո): Ինչ վերաբերում է իր փաստաբանին ենթադրյալ պարտք մնացած գումարին՝ դիմումատուն չէր կարողացել նման համաձայնության վերաբերյալ որևէ փաստաթղթային ապացույց ներկայացնել: Նա նաև չի ներկայացրել որևէ ապացույց՝ համաձայն որի նա որևէ գումար է պարտք իր փաստաբանին ճանապարհածախսի կամ ապրուստի համար, կամ որ այդ ծախսերը իրականում կատարված էին եղել: Նման պայմաններում՝ հաշվի առնելով, որ փաստաթղթային ապացույցով հիմնավորված ծախսերի չափը պակաս է դիմումատուի՝ Եվրոպայի խորհրդի կողմից որպես իրավական օգնության ստացած 715 եվրո գումարից, Դատարանը մերժեց դիմումատուի՝ ծախսերի և ծախքերի վերաբերյալ պահանջը:

Գ. Տույժեր

75. Դատարանը պատշաճ է համարում, որ տույժերը պետք է հիմնված լինեն Եվրոպական Կենտրոնական Բանկի վարկային առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է ավելացվի երեք տոկոս:

ՎԵՐԸ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ

1. *Հայտարարեց* դիմումի մնացյալ մասը ընդունելի։

2. *Վճռեց*, որ դիմումատուի՝ արդար դատաքննությունից զրկված լինելը հանդիսացել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում։

3. *Վճռեց*, որ չկա անհրաժեշտություն առանձին քննարկելու գանգատը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի ներքո, իր՝ ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի կապակցությամբ։

4. *Վճռեց*

ա) պատասխանող պետությունը պարտավոր է որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում վճարել դիմումատուին 4,000 եվրո (չորս հազար եվրո) Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, սույն դատավճռի ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության տարածքում գործող ազգային արժույթով՝ վճարման օրվա փոխարժեքով, գումարած նշված գումարի վրա հաշվարկված բոլոր տեսակի հարկերը։

բ) վերընշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարումը, պարզ տոկոսները ենթակա են վճարման վերը նշված գումարից հաշվարկված՝ պարտավորությունների չկատարման ժամանակահատվածում Եվրոպական Կենտրոնական Բանկի կողմից սահմանված առավելագույն վարկային տոկոսադրույքին համարժեք գումարի չափով, որին ավելացվում է երեք տոկոս։

5. *Մերժեց* դիմումատուի պահանջի մնացյալ մասը՝ արդարացի փոխհատուցման վերաբերյալ։

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է՝ 28 հունիսի 2007 թ., համաձայն Դատարանի Կանոնակարգի կանոն 77 կետ 2-ի և 3-ի։

Վինսենթ Բերժե Բոսչան Զուպանչիչ

Քարտուղար Նախագահ